ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» սեպտեմբերի 2026 թվականի N 910-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Գ. ԷՄԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Հովհաննես Հովհաննիսյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 27092024-07-0074 վկայական*)* ***ք. Չարենցավան Գ էմինի փողոց թիվ 10*** հասցեում գտնվող 23 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 23 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Հովհաննես Հովհաննիսյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Հովհաննես Հովհաննիսյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 46000 (քառասունվեց հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 103000 (մեկ հարյուր երեք հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Հովհաննես Հովհաննիսյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Հովհաննես Հովհաննիսյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 10
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«10» սեպտեմբերի 2026 թվականի N 909-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի ԹԻՎ 768-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 22-ի «Չարենցավանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող ք. Չարենցավան 6-րդ թաղամաս 12-րդ շենք թիվ 1 հասցեում գտնվող ինքնակամ բացված դուռ և պատուհանն օրինականացնելու մասին» թիվ 768-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ճանաչել օրինական «Չարենցավանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող ք. Չարենցավան 6-րդ թաղամաս 12-րդ շենք թիվ 1 հասցեում ինքնակամ բացված 5 դուռ և 4 պատուհանը՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 24072026-07-0076 վկայականի:
Ինքնակամ բացված 5 դռան և 4 պատուհանի համար 30-օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին վճարել 21.000 ՀՀ դրամ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 10
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» սեպտեմբերի 2026 թվականի N 908-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակչի դիմումը սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից:

Կիրակոսյան	Ռոմելա	30000	դրամ
Գյուլումյան	Վերա	30000	դրամ
Մարգարյան	Անահիտ	15000	դրամ
Հովհաննիսյան	Ջիվան	15000	դրամ
Մելիքյան	Անթառամ	15000	դրամ
Ազարյան	Ռոզա	15000	դրամ
Աղաբաբյան	Էլմիրա	15000	դրամ
Մելիքյան	Նորա	10000	դրամ
Մարգարյան	Քնարիկ	10000	դրամ
Բալբաբյան	Գեղամ	10000	դրամ
Խաչատրյան	Լորետա	10000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 10
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» սեպտեմբերի 2026 թվականի N 907-Ա

ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, համաձայն «Չափշին» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի, հաշվի առնելով, որ նշված հողամասը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել, ըստ օրենքի ժառանգության իրավունքի, Տիգրան Գրիգորյանի կողմից 07-015-0215-0029 ծածկագրով 0.06 հա մակերեսով հողատարածքից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 28 քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:

2. 07-015-0215-0029 ծածկագրով հողատարածքը հասցեավորել «**Չարենցավան համայնք գյուղ Արզական, Ավազան թաղամաս, 4-րդ փողոց, թիվ 20**»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 10
ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«10» սեպտեմբերի 2026 թվականի N 906-Ա

ՀՀ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՈՄԻՏԵԻ 1994 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ԹԻՎ 5 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 5-րդ թաղամասի 4-րդ շենքի 15 բնակարանի բնակիչ Անի Նաղդալյանի /լիազորված անձ/ 2026 թվականի օգոստոսի 28-ի թիվ 4139/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ պատգամավորների Չարենցավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1994 թվականի ապրիլի 15-ի «Պետական ֆոնդի տներում բնակարանները քաղաքացիների կողմից անվճար սեփականաշնորհելու մասին» թիվ 5 որոշումը (անշարժ գույքի գտվելու վայր՝ ՀՀ Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Չարենցավան քաղաք 4-րդ թաղամաս 13-րդ շենք 37 բնակարան) շարադրել նոր խմբագրմամբ.

«Նաղդալյան Վլադիմիր Հովհաննեսի
Նաղդալյան Աշոտ Վլադիմիրի
Հովսեփյան Անահիտ Սուրենի
Նաղդալյան Դավիթ Աշոտի
Նաղդալյան Տիգրան Աշոտի
Մարգարյան Եվգենյա Առաքելի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 10
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«10» սեպտեմբերի 2026 թվականի N 905-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարին կից աշխատանքային խմբի 2026 թվականի սեպտեմբերի 08-ի վարչական վարույթի նիստի թիվ 16 արձանագրությունը, **որոշում եմ**.

1. 26.08.2026 թվականին հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Զեփյուռ Ավետիսի Ղլեջյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զեփյուռ Ավետիսի Ղլեջյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 10
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«10» սեպտեմբերի 2026 թվականի N 904-Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 17-ին անցկացվելիք ութերորդ նստաշրջանի թիվ 1 հերթական նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողովներ.

1.1 Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով՝

●***/նախագիծ 73-Ն/*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 100-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

●***/նախագիծ 74-Ա/*** Չարենցավան համայնքի 2026 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին.

1.2 Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝

●***/նախագիծ 75-Ա/*** Հայաստանի Հանրապետության 2027 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով « ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 33, 34 շենքերի հետնամասում և 4-րդ թաղամասի 1,2,11,12 շենքերին հարակից տարածքում խաղահրապարակների կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին

●***/նախագիծ 76-Ա/*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալներին օտարելու համաձայնություն տալու մասին

●***/նախագիծ 77-Ա/*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

●***/նախագիծ 78-Ն/*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 14-ի N 37-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին

•***/նախագիծ 79-Ն/*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 95-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին

•***/նախագիծ 80-Ա/*** Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը վարձակալության իրավունքով «ԲԻ ԷՄ ՍԻ ՊՐՈՋԵՔԹ» ՓԲԸ-ին տրամադրելու թույլտվություն տալու մասին

•***/նախագիծ 81-Ա/*** Պետական սեփականություն հանդիսացող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու և Չարենցավան համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի թիվ 58-Ա որոշման 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու մասին

•***/նախագիծ 82-Ա/*** Սեփականություն իրավունքով Գուրգեն Հովհաննիսյանին պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին

•***/նախագիծ 83-Ա/*** Սեփականություն իրավունքով Անդրանիկ Թադևոսյանին պատկանող հողատարածքի մի հատվածի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին

Քննարկում՝ Չարենցավան համայնքի գերեզմանոցների ներկա խնդիրների վերաբերյալ

1.3. Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով՝

•***/նախագիծ 72-Ա/*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 99-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

•***/նախագիծ 84-Ա/*** Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 10
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» սեպտեմբերի 2026 թվականի N 903-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԶԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ և 23-րդ մասերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 88-Ա քաղվածքը՝ ***որոշում եմ.***

1. Համաձայն «Կոտայք-7» համակցված տարածական պլանավորման փաստաթղթի՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի 07-015-0162-0234 ծածկագրով հողատարածքից 7.54848 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրի գործառնական և նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքի՝ համաձայն «Գոռ Սահակյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2025BHANCU /0.57165 հա/, 2025NWJXYG /1.29689 հա/, 2025VEDPTQ /0.56703 հա/, 2025BKDWCF /0.73077 հա/, 2025YNQMUA /0.68307 հա/, 2025GT3WCQ /1.00941 հա/, 2025NWAA9M /0.49206 հա/, 2025GYC5L2 /1.16830 հա/, 2025MABYHU /0.60321 հա/, 2025WKRVWS /0.42609 հա/ ծածկագրերի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 08
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» սեպտեմբերի 2026 թվականի N 902-Ա

<<ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ԲԲԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 07-015-0199-0052 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.134 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 64-րդ կետի դրույթներով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 06.07.2026թ. թիվ 1/փ-273 եզրակացությունը և համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի թիվ 59-Ա որոշումը, հաշվի առնելով <<Տելեկոմ Արմենիա>> ԲԲԸ-ի գրությունը՝ ***որոշում եմ.***

1. <<Տելեկոմ Արմենիա>> ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 07-015-0199-0052 կադաստրային ծածկագրով 0.134 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի նպատակային և գործառնական նշանակությունը համարել փոխված՝ որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության կապի հողեր:
2. Առաջացած հողատարածքը հասցեավորել ***Չարենցավան համայնք գյուղ Արզական թիվ 25:***
3. Համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին վճարել 3750000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումար՝ որպես կադաստրային արժեքի տարբերություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 08
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» սեպտեմբերի 2026 թվականի N 901-Ա

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԵՂՉ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 34 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, քննարկելով Չարենցավան համայնքի Բջնի գյուղի բնակիչ Վարդան Ելինյանի դիմումը /մուտք՝ 31.08.2026թ., համար՝ 4176/01/ աղբահանության վարձավճարի զեղչ սահմանելու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնք, գյուղ Բջնի, 12-րդ փողոց, տուն 17 հասցեի ներքոհիշյալ բնակիչների համար սահմանել աղբահանության վարձավճարի 100 % զեղչ՝

Վարդան Ավագի Ելինյան

Վարսենիկ Ռաֆայելի Մարգարյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2026 թվականի հունվարի 01-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 08
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» սեպտեմբերի 2026 թվականի N 900-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով «ՓՐԱՅՄ ՌՈՋ ՀԱ» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Աթանեսյանի 07.09.2026թ. թիվ 4289/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն սեփականության իրավունքով «ՓՐԱՅՄ ՌՈՋ ՀԱ» ՍՊԸ-ին պատկանող Չարենցավան համայնք գյուղ Ալափարս թիվ 1 /հողամասի մակերեսը՝ 2.5249 հա/,
   Չարենցավան համայնք գյուղ Ալափարս թիվ 14 /հողամասի մակերեսը՝ 0.689 հա/, Չարենցավան համայնք գյուղ Ալափարս թիվ 15 /հողամասի մակերեսը՝ 1.448 հա/, Չարենցավան համայնք գյուղ Ալափարս թիվ 16 /հողամասի մակերեսը՝ 1.04481 հա/ և Չարենցավան համայնք գյուղ Ալափարս թիվ 17 /հողամասի մակերեսը՝ 0.06585 հա/ գույքը միավորել՝ դարձնելով մեկ միավոր և հասցեավորել Չարենցավան համայնք գյուղ Ալափարս թիվ 1 /հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 5.77256 հա/ միավոր:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 08
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» սեպտեմբերի 2026 թվականի N 899-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ռ. Աբրահամյանի 27.08.2026 թվականի թիվ 4121/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն սեփականության իրավունքով Ռուդիկ Աբրահամյանին պատկանող Չարենցավան համայնք գյուղ Բջնի 1-ին փողոց 2-րդ նրբանցք թիվ 2 հասցեի գույքը բաժանել 3 միավորի և հասցեավորել որպես Չարենցավան համայնք գյուղ Բջնի 1-ին փողոց 2-րդ նրբանցք թիվ 2 (հողամասի մակերեսը՝ 0.04768 հա, առանձնացվող հատված-3), Չարենցավան համայնք գյուղ Բջնի 1-ին փողոց 2-րդ նրբանցք թիվ 2/1 /հողամասի մակերեսը՝ 0.04768 հա, առանձնացվող հատված-2) և Չարենցավան համայնք գյուղ Բջնի 1-ին փողոց 2-րդ նրբանցք թիվ 2/2 /հողամասի մակերեսը՝ 0.04769 հա, առանձնացվող հատված-1) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Գեոլենդ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 08
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» սեպտեմբեր 2026 թվականի N 898-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակչի դիմումը սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից:

Արշակյան	Աստղիկ	30000	դրամ
Բալյան	Անի	30000	դրամ
Պողոսյան	Արսեն	25000	դրամ
Մելքումյան	Կարո	25000	դրամ
Բալյան	Սարգիս	20000	դրամ
Նավոյան	Անդրանիկ	20000	դրամ
Բաղիյան	Նարինե	20000	դրամ
Համբարձումյան	Ռուզաննա	15000	դրամ
Ղևոնդյան	Ելենա	10000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբեր 08
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«07» սեպտեմբերի 2026 թվականի N 897-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻԻ 30-Ի ԹԻՎ 473-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 30-ի «**Համայնքային հողամասում գտնվող ինքնակամ կառուցված ավտոտնակը համայնքային սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին**» թիվ 473-Ա որոշման մեջ կատարել լրացում հետևյալ խմբագրությամբ՝
«Սույն որոշմամբ դադարեցնել 07-007-0017-0309 ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 20 քմ մակերեսով հողամասի նկատմամբ կատարված իրավունքի պետական գրանցումը և ուժը կորցրած ճանաչել թիվ 03052013-07-0015 վկայականը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«07» սեպտեմբերի 2026 թվականի N 896-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳՆԵԼ ՍԱՐԻԲԵԿԻ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԵՎ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով և 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով և 219.1-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի 2026 թվականի սեպտեմբերի 04-ի թիվ 05 արձանագրությունը, **որոշում եմ.**

1. **Գնել Սարիբեկի Խուրշուդյանի** նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2026 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը 11:00-ին՝ ք. Չարենցավան, Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1 հասցեում, Չարենցավանի համայնքապետարանի շենքում /նիստին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, ներկայացուցչի դեպքում՝ լիազորագրով/:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել վարչական վարույթի մասնակիցներին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ ԿոտայքիմարզիՉարենցավանհամայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանիանվ.հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«07» սեպտեմբերի 2026 թվականի N 895-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 31-րդ հոդվածի դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. 2026 թվականի սեպտեմբերի 07-ից սկսել Չարենցավան համայնքի 2027 թվականի բյուջետային գործընթացը:

2. Հանձնարարել՝

ա) Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնին՝

1) ՀՈԱԿ-ներից բյուջետային հայտերն ընդունել մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը,
2) Մշակել Չարենցավանի համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների ծախսերի նորմատիվները,
3) Համապատասխան պետական կառույցներից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջել համայնքի 2027 թվականի բյուջեի եկամուտների հաշվարկման համար տեղեկություններ,
4) 2027 թվականի բյուջեի նախագիծը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի ղեկավարին ներկայացնել մինչև 2026 թվականի նոյեմբերի 02-ը:

բ) Քաղաքաշինության, ճարտարապետության,գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնին՝ ներկայացնել Չարենցավան համայնքում 2027 թվականին նախատեսվող բարեկարգման, կանաչապատման, ընթացիկ և կապիտալ շինարարական աշխատանքների ցանկը, թերությունների ակտերը և նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:

գ) Առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման, քաղաքաշինության, ճարտարապետության,գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժիններին համատեղ հաշվարկել և ներկայացնել առաջարկություն 2027 թվականի համայնքի բյուջե գանձվող հարկային և հարկային եկամուտների կանխատեսվող չափերը:

դ) Կրթության,մշակույթի սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնին՝ ներկայացնել Չարենցավան համայնքում 2027 թվականին իրականացվելիք միջոցառումների ցանկը, ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:

ե) ***Զարգացման ծրագրերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնին***՝ ներկայացնել 2027 թվականին անհրաժեշտ համակարգչային, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ցանկը, սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ցանկը, ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:

զ) ***Աշխատակազմի քարտուղարին***՝ 2027 թվականի բյուջետային գործընթացը սկսելու վերաբերյալ իրազեկել համայնքային կազմակերպություններին և համատիրություններին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.սեպտեմբերի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«04» սեպտեմբերի 2026 թվականի N 894-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի ԹԻՎ 854-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 21-ի «Սեփականության իրավունքով Մաթևոս Ապերյանին պատկանող 07-008-0231-0028 կադաստրային ծածկագրով հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվության մասին» թիվ 854-Ա որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝
2. «Մաթևոս Ապերյանին պատկանող գյուղատնտեսական արտադրական նշանակության շինության՝ ջերմոցի նախագծման թույլտվության համար տրամադրել 04.09.2026թ. թիվ ՆԹ-11505-26 ճարտարապետահատակագծային առաջադրանքը»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 04
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«04» սեպտեմբերի 2026 թվականի N 893-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 19 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 25-րդ կետի և 32-րդ կետի ա/,բ/ ենթակետերի պահանջներով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, և հիմք ընդունելով Ս. Խաչատրյանի 06.08.2026 թվականի թիվ 3795/07 դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 19 բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունները:
2. Ընդունել ի գիտություն, որ Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 19 բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում ինքնակամ իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սահմանել, որ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Սաթենիկ, Սերյոժա, Արամ Խաչատրյաններին և Հասմիկ Մարտիրոսյանին պատկանող 3-րդ թաղամասի 19-րդ շենքի թիվ 17 բնակարանին կցակառույց 9.2 քմ արտաքին մակերեսով օրինական ճանաչված շինության և ինքնակամ բացված 1 պատուհանի համար 30 օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին 8000 ՀՀ դրամ չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ համաձայն «Գոռ Սահակյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2026TQFC4Y ծածկագրի:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 04
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» սեպտեմբերի 2026 թվականի N 892-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Հ. ՔՈՉԱՐԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2/7 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Հերիքնազ Բալաբեկյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 20082026-07-0044 վկայական) ***ք. Չարենցավան Հ. Քոչարի փողոց 1-ին փակուղի թիվ 2/7*** հասցեում գտնվող 77.7 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 77.7 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Հերիքնազ Բալաբեկյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Հերիքնազ Բալաբեկյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 154000 (մեկ հարյուր հիսունչորս հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 346000 (երեք հարյուր քառասունվեց հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Հերիքնազ Բալաբեկյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Հերիքնազ Բալաբեկյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.սեպտեմբերի 04
Ք.Չարենցավան